ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Հրապարակային ընտրություններ

## Ինչպես ստանալ **տեղեկատվություն** ընտրական գործընթացներում

Ուղեցույց լրագրողների համար

Մարինե Հակոբյան
Գեւորգ Հայրապետյան

# Հրապարակային ընտրություններ

## Ինչպես ստանալ տեղեկատվություն ընտրական գործընթացներում

Ուղեցույց
լրագրողների
համար

Երեւան 2012

Հեղինակներ՝ **Մարինե Հակոբյան**
**Գեւորգ Հայրապետյան**
Խմբագիր՝ **Շուշան Դոյդոյան**

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
**Երևանյան գրասենյակ**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուղեցույցը մշակվել եւ վերահրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Ուղեցույցում արտահայտված կարծիքներն ու հետեւությունները հեղինակներինն են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի տեսակետները:



# Բովանդակություն

**Ուղեցույցի նպատակը** ..... 4

**Բաժին 1. Ինչպե՞ս ստանալ տեղեկություն օրենքի համաձայն** ..... 5

1.1 Ու՞ր դիմել. ընտրական տեղեկություն տնօրինող լիազոր մարմինները ..... 8

1.2 Ինչպե՞ս դիմել. տեղեկություն ստանալու բանավոր եւ գրավոր հարցումներ ..... 13

1.3 Ի՞նչ ձեւով եւ ժամկետներում պետք է տրամադրվի տեղեկությունը ..... 17

1.4 Պե՞տք է արդյոք վճարել տեղեկության տրամադրման համար ..... 19

1.5 Լրագրողների՝ ընտրական մարմինների նիստերի մասնակցության իրավունքը. լրագրողի հավատարմագրում ..... 20

1.6 Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ մերժման կարգը ..... 24

**Բաժին 2. Ինչպե՞ս բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները.** ..... 27

2.1 Պատասխանատվություն ..... 27

2.2 Ի՞նչ պատասխանատվություն է կրում տեղեկատվություն տնօրինողը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար ..... 28

**Բաժին 3. Պարտադիր հրապարակման ենթակա ընտրական տեղեկությունները եւ դրանց տրամադրման ժամկետները** ..... 32

3.1 Ընտրողների ցուցակները ..... 32

3.2 Քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ..... 34

3.3 ԿԸՀ-ի համացանցային կայքը՝www.elections.am ..... 35

**Հրապարակման ենթակա ընտրական տեղեկատվության ցանկ** ..... 38

# Ուղեցույցի նպատակը

Տեղեկատվության ազատությունը երաշխիք է եւ արդյունավետ միջոց ընտրությունների հրապարակայնությունը եւ թափանցիկությունը ապահովելու համար: Լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանվածության աստիճանից է կախված նաեւ ընտրական գործընթացների մասին ողջ հասարակության իրազեկված լինելու իրավունքի լիարժեք ապահովումը:

Ներկայացվող ուղեցույցի հիմնական նպատակն է լրատվամիջոցների ներկայացուցիչներին, լրագրողներին ծանոթացնել տեղեկատվության ազատության (այսուհետ՝ նաեւ ՏԱ) հասկացությանը եւ նշանակությանը ընտրությունների ժամանակ, ինչպես նրանք կարող են օգտագործել տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը ընտրությունների ընթացքում տեղեկատվություն ստանալու նպատակով: Ուղեցույցի առաջին բաժինը նվիրված է ընտրական տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պայմաններին. ինչպես եւ որ մարմիններին կարող են դիմել լրագրողները տեղեկություն ստանալու համար, ինչ կարգով եւ ժամկետներում պետք է նրանց տրամադրվեն ընտրական հանձնաժողովների որոշումները, նիստերի արձանագրությունները եւ ընտրություններին առնչվող այլ փաստաթղթեր: Այս բաժինը հատուկ անդրադառնում է նաեւ լրագրողների՝ նիստերի մասնակցության իրավունքին եւ դրա իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Ուղեցույցի 2-րդ բաժինն անդրադառնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմներին եւ իրավական պատասխանատվության խնդրին. ինչպես կարող են լրագրողները բողոքարկել տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին ընտրական մարմինների որոշումները, ինչ իրավական պատասխանատվություն է առաջ գալիս տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների դեպքում:

Երրորդ բաժնում ներկայացվում է այն տեղեկությունների եւ/կամ փաստաթղթերի ամբողջական ցանկը, որոնք ենթակա են պարտադիր հրապարակման կամ լրատվամիջոցներին/լրագրողներին տրամադրման:

Այս ուղեցույցը վերահրատարակվում է՝ նպատակ ունենալով ներկայացնել ՀՀ ընտրական օրենսդրության մեջ կատարված առանցքային փոփոխությունները:



## Բաժին 1

# Ինչպե՞ս ստանալ տեղեկություն օրենքի համաձայն

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը եւ ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը»:

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասում, որը սահմանում է.

**«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:**

Իսկ ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածն ամրագրում է կառավարման մարմիններին դիմելու եւ պատասխան ստանալու իրավունքը.

**«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:**

Սահմանադրական այս դրույթն ամրագրվում է նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, որի համաձայն՝

**«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:**

Ընտրական գործընթացներում լրագրողների համար տեղեկատվության մատչելիությունն ու ազատությունն ապահովվում են նախեւառաջ ընտրու-

թյունների հրապարակայնության սկզբունքի իրականացման շնորհիվ: ՀՀ Ընտրական օրենսգիրքն առանձին՝ 6-րդ հոդվածով անդրադարձել է ընտրությունների հրապարակայնության ապահովմանը: Այդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Ընտրությունները նախապատրաստվում եւ անցկացվում են հրապարակայնորեն»:

Հրապարակայնության սկզբունքն իր տեղն է գտել նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասում: ՏԱ հրապարակայնության սկզբունքի էությունը հետեւյալն է. այն հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարեւոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, երաշխավորելով մտքի եւ խոսքի ազատության իրավունքների իրագործումը, ամրագրում է նաեւ լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Որպեսզի լրատվության միջոցները ճիշտ ծառայեն իրենց նպատակին, դրանք պետք է լինեն անկախ, ազատ եւ չենթարկվեն գրաքննության: Անկախ է համարվում այն մամուլը, որը չի ենթարկվում ոչ կառավարությանը, ոչ էլ գրաքննության[1]:

ԶԼՄ-ների ներկայացուցիչների ազատության լրացուցիչ իրավական երաշխիք է ամրագրված նաեւ ՀՀ Ընտրական օրենսգրքով: Այսպես, ՀՀ ԸՕ-ի 31-րդ հոդվածի 4-րդ կետը նշում է, որ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի՝ ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում:

Տեղեկատվություն ստանալու իրավունքը լրագրողի հիմնական իրավունքներից է, առանց որի նա չի կարող կատարել ընտրական գործընթացների մասին հասարակությանն իրազեկելու՝ իր առաջնային առաքելությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»: Լրագրողն ունի ինչպես տեղեկատվությանը ծանոթանալու եւ/կամ դրանից քաղվածքներ անելու, այնպես էլ այն կամ դրա պատճենը ստանալու իրավունք:

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», էջ 309, http://www.moj.am/files/docs/81.pdf



ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներն իրավունք ունեն.

- ներկա լինելու ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաեւ քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում),
- ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար,
- լուսանկարահանելու եւ տեսանկարահանելու.
  - ընտրական հանձնաժողովների նիստերը,
  - քվեարկության ընթացքը,
  - քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները,
  - քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը[2]:
- կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետեւելու.
  - քվեաթերթիկների տպագրման,
  - փոխադրման,
  - պահպանման,
  - քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:
- անարգել ծանոթանալու.
  - քվեաթերթիկների նմուշներին,
  - տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին,
  - ընտրական հանձնաժողովների որոշումներին,
  - նիստերի արձանագրություններին,
  - դատարանի համապատասխան վճիռներին,
  - լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին:

Վերոնշյալ փաստաթղթերին ծանոթանալուց բացի, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներն իրավունք ունեն ստանալ նաեւ դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների

2. ՀՀ Ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է լուսանկարահանել կամ տեսանկարահանել ընտրողների ստորագրած ցուցակները:

ստորագրած ցուցակների): Ընտրողների ստորագրած ցուցակներից ԶԼՄ-ների ներկայացուցիչներն ինքնուրույն քաղվածքներ կատարելու իրավունք ունեն միայն քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ:

## Ի՞նչ է տեղեկությունը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տեղեկություն հասկացության բավականին ընդգրկուն շրջանակ է սահմանում: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի՝

**Տեղեկություն է համարվում՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):**

Կարեւոր է, որ օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առկա տվյալները, այլեւ չի դնում կրիչի որեւէ սահմանափակում՝ էլեկտրոնային, թե ֆիզիկական: Տեղեկությունը կարող է լինել տեքստային կամ էլեկտրոնային փաստաթղթի, ձայնագրության, տեսագրության կամ լուսաժապավենի, գծագրերի, սխեմաների, նոտաների կամ քարտեզների տեսքով: Այն կարող է ամրագրված լինել փաստաթղթի, ժապավենի (տեսա-ձայնային), պնակիտի (դիսկետի), խտասալիկի (CD) ու այլ նյութական եւ էլեկտրոնային կրիչների վրա:

## 1.1 Ու՞ր դիմել. ընտրական տեղեկություն տնօրինող լիազոր մարմինները

Ընտրական տեղեկություն տնօրինող լիազոր մարմինները կազմավորվում են եռաստիճան համակարգով: Դրանք են՝

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ),
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը (ԸԸՀ),
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը (ՏԸՀ):



## Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որպես տեղեկություն տնօրինող

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշտական գործող մարմին է եւ տնօրինում է Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների կազմակերպման եւ դրանց օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված տեղեկատվությունը՝ իրավահաջորդության սկզբունքով, ինչպես նաեւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ԶԼՄ ներկայացուցիչները կարող են ստանալ հետեւյալ տեղեկությունները.

1. ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման համար հատկացված պետական բյուջեի միջոցների եւ դրա վերահսկողության մասին,
2. իր եւ ստորադաս ընտրական հանձնաժողովների կանոնակարգերի մասին,
3. իր կողմից կազմակերպվող եւ անցկացվող՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների, դասընթացներ կազմակերպելու եւ որակավորում շնորհելու կարգի մասին,
4. ՀՀ Ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառման եւ դրա վերահսկողության մասին,
5. սահմանված քվեաթերթիկների, արձանագրությունների եւ ընտրական այլ փաստաթղթերի ձեւերի, նմուշների, դրանց լրացման եւ պահպանման կարգի մասին,
6. թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ՝ սահմանված փաստաթղթերի օրինակելի ձեւերի մասին,
7. իր կողմից ընդունված որոշումները,
8. իր կողմից վերացված, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ ճանաչված՝ հանձնաժողովների՝ Ընտրական օրենսգրքին հակասող որոշումների մասին (բացառությամբ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամներ ընտրվելու մասին ԸԸՀ որոշումների),
9. ընտրությունների նախապատրաստման ու անցկացման մասին ընտրական հանձնաժողովների եւ պետական մարմինների հաղորդումների մասին,

10. զանգվածային լրատվության միջոցների, դիտորդների հավատարմագրման մասին,

11. Հանրապետության նախագահի թեկնածուների կենսագրական տվյալների մասին,

12. Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների գրանցման մասին,

13. ՀՀ Ազգային ժողովի լրացուցիչ եւ նոր ընտրությունների նշանակման մասին,

14. իր կողմից յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ հրապարակված ուսումնական ձեռնարկը տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց եւ դիտորդների համար,

15. ընտրական հանձնաժողովներում վիճակահանություններ անցկացնելու կարգի մասին,

16. իր կողմից հաստատված՝ քվեատուփի նմուշի (չափսերի) մասին,

17. կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մասին,

18. օրենքով սահմանված կարգով իր կողմից ստեղծված հիմնարկների մասին,

19. ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ իր լիազորությունների մասին:

Ընտրական գործընթացի ավարտից հետո նույնպես ԿԸՀ-ի տնօրինության տակ գտնվող վերոնշյալ տեղեկությունները (որոշումներ, արձանագրություններ, քաղվածքներ, նմուշներ եւ այլն) շարունակում են յուրաքանչյուրի (ներառյալ՝ լրագրողների) համար մնալ մատչելի եւ հրապարակման ենթակա: Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո, իսկ դատական վեճի առկայության դեպքում՝ վերջնական որոշում ընդունելուց հետո, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ապահովում է նշված փաստաթղթերի պահպանությունը եւ դրանք պահպանության է հանձնում Հայաստանի պետական արխիվ, որտեղ եւ դրանք մատչելի են յուրաքանչյուրի համար:

Նշված փաստաթղթերի մեծ մասը հրապարակվում է նաեւ ԿԸՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.elections.am:



## Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որպես տեղեկություն տնօրինող

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է, որը կազմավորվում է յուրաքանչյուր ընտրատարածքի համար՝ հիմք ընդունելով Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրատարածքների կազմավորման մասին որոշումը: Հետեւաբար, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տնօրինում է տվյալ ընտրատարածքում ընտրությունները կազմակերպելու եւ իր տեղամասերում դրանց անցկացման օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից լրագրողները կարող են տեղեկություններ ստանալ ընտրատարածքում՝

1. ընտրատարածքում ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման եւ դրա նկատմամբ վերահսկողության իրականացման մասին,

2. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեաթերթիկների նմուշների մասին,

3. ընտրական տեղամասերի հերթական համարների մասին,

4. իր եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործունեության մասին,

5. տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումների եւ գործողությունների վերաբերյալ ստացված դիմումների (բողոքների), դրանց քննարկման մասին,

6. իր կողմից վերանայված կամ վերացված՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ ՀՀ Ընտրական օրենսգրքին հակասող որոշումների մասին,

7. քվեարկության նախնական արդյունքների մասին,

8. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրերի մասին,

9. տեղամասային կենտրոնների՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան կահավորման եւ դրա վերահսկողության մասին,

10. Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուների գրանցման մասին,

**11.** տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ իր իրականացրած վերահսկողության մասին,

**12.** ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին,

**13.** ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ իր լիազորությունների մասին:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ ընտրություններից հետո՝ քսանօրյա ժամկետում: Այս հաշվետվությանը եւս լրագրողը կարող է ծանոթանալ:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովը որպես տեղեկություն տնօրինող

Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում եւ գործում են ընտրությունների կազմակերպման եւ անցկացման ժամանակաշրջանում: Տեղամասային ընտրական հանձնաժողովը լինելով ընտրությունների անցկացման անմիջական օղակը, տնօրինում է՝

- տվյալ տեղամասի ընտրացուցակի,
- դատական կարգով դրանցում կատարված լրացումների,
- տվյալ տեղամասին «կցված» ընտրողների մասնակցության չափի,
- քվեարկության արդյունքների,
- նկատված խախտումների,
- տեղամասում ընտրությունների անցկացման հետ կապված այլ տեղեկություններ:

Ընդհանուր առմամբ, Տեղամասային ընտրական հանձնաժողովից զանգվածային լրատվության միջոցները կարող են ստանալ տեղեկություններ տեղամասում՝

**1.** ընտրական տեղամասում քվեարկության ընթացքի մասին,

**2.** ընտրական տեղամասում ամփոփված քվեարկության արդյունքների մասին,

**3.** ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը,

**4.** ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ իր լիազորությունների մասին:



Տվյալ ընտրական գործընթացի ավարտից հետո նույնպես ընտրական տեղեկությունները (որոշումներ, արձանագրություններ, քաղվածքներ, նմուշներ եւ այլն) շարունակում են յուրաքանչյուրի (ներառյալ՝ լրագրողների) համար մնալ մատչելի եւ հրապարակման ենթակա: Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրական փաստաթղթերը քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո պահպանության են հանձնվում Հայաստանի պետական արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար[3], որտեղ եւ դրանք մատչելի են յուրաքանչյուրի համար:

## 1.2 Ինչպե՞ս դիմել. տեղեկություն ստանալու բանավոր եւ գրավոր հարցումներ

Լրագրողը կարող է դիմել ինչպես ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին անարգել ծանոթանալու, այնպես էլ դրանցից քաղվածքներ կատարելու եւ/կամ դրանց պատճենը ստանալու համար:

Սակայն պետք է նշել, որ անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում հրապարակվում են՝ տեսանելի, մատչելի տեղերում փակցնելու, զանգվածային լրատվության միջոցներով հայտարարելու, համապատասխան ինտերնետային էջում տեղադրելու, ինչպես նաեւ դրանց ուղղակիորեն ծանոթանալու, պատճենելու եւ այլ ձեւերով հրապարակային դարձնելու միջոցով: Հետեւաբեր շատ հաճախ դուք պարզապես կարող եք շատ հեշտությամբ, արդյունավետությամբ եւ առանց ժամանակի կորստի ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ իմանալով, թե որ լրազոր մարմիննն է այն տնօրինում: Ընտրական օրենսգիրքը սահմանում է պարտադիր հրապարակման, տրամադրման ենթակա մի շարք տեղեկություններ, որոնց ամբողջական ցանկը ներկայացված է սույն ուղեցույցի 3-րդ բաժում (էջ 38):

Տեղեկություններ ստանալու համար լրագրողները կարող են նաեւ դիմել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հարցումով: Խորհուրդ ենք տալիս հնարավորության եւ ժամանակի առկայության դեպքում դիմել գրավոր հարցումով (տես տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձեւը, էջ 16): Այս կերպ, եթե ձեզ հետագայում մերժեն կամ ուշացնեն պատասխանը, դուք մերժումը բողոքարկելու հնարավորություն կունենաք: Եթե գրավոր հարցումն ուղարկում եք փոստով, ապա խորհուրդ ենք տալիս անպայման հարցումն ուղարկել պատվիրված փոստի միջոցով. փոստային անդորրագիրը

3. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 52-րդ հոդված, 3-րդ կետ:

ձեզ հնարավորություն կտա հետագայում ապացուցել, որ հարցումն իսկապես ուղարկվել է կոնկրետ մարմնին: Ի դեպ, գրավոր հարցումը կարող եք ուղարկել ինչպես ձեր անունից, որպես լրագրող, այնպես էլ ձեր լրատվամիջոցի անունից (համապատասխան տիտղոսաթերթի վրա), քանի որ տեղեկություն ստանալու իրավունք ունեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

**Ընտրությունների կազմակերպման, անցկացման եւ ամփոփման բոլոր գործընթացներում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են անարգել մասնակցել, հետեւել, ուղղել հարցեր, կատարել ճշտումներ եւ հարցումների միջոցով ստանալ տեղեկություններ:**

## Տեղեկություն ստանալու բանավոր եւ գրավոր հարցումներ

Տեղեկությունը ստանալու համար նախ պետք է հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին: Տեղեկություն ստանալու համար կարելի է դիմել եւ՛ գրավոր, եւ՛ բանավոր:

Գործնականում լրագրողները տեղեկություն ստանալու համար հիմնականում դիմում են բանավոր: Նրանց կա՛մ տալիս են տեղեկատվություն, կամ ամենատարբեր պատճառներով մերժում են: Ընդ որում, այդ պատճառների մեծ մասն անօրինական է եւ չի բխում օրենքի պահանջներից: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը, ինչպես նաեւ, թե որ լրատվամիջոցն է նա ներկայացնում:

**Ընտրությունների մասին տեղեկատվություն ստանալու համար լրագրողից հավատարմագրում չի պահանջվում:**

Նա պետք է պարզապես ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ: Բանավոր հարցումով դիմելիս նախ պետք է պարզել, թե որ պաշտոնյան է պատասխանատու տվյալ տեղեկությունը տրամադրելու համար: Պարզելուց հետո կարող եք անմիջապես դիմել նրան՝ նշելով, թե ինչ տեսքով կամ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը՝ տեսնել կամ կարդալ փաստաթուղթը, դրանից քաղվածքներ կատարել, ստանալ դրա պատճենը՝ թղթի, պնակիտի կամ խտասալիկի վրա ամրագրված:

Ինչպես արդեն նշվեց, ժամանակի եւ հնարավորության առկայության դեպքում լրագրողը կարող է ներկայացնել նաեւ գրավոր հարցում, որն առավել



պաշտպանված կդարձնի լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (հոդված 9) սահմանված են գրավոր հարցմանը ներկայացվող պահանջները.

**Գրավոր հարցումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում այն կարող են չքննարկել:**

Գրավոր հարցման մեջ դիմողը **պարտադիր** պետք է նշի.

- իր անունը, ազգանունը,
- իր ներկայացրած ՁԼՄ-ի անվանումը եւ գտնվելու վայրը (դրա բացակայության դեպքում՝ իր բնակության հասցեն):
- Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի:

Հարցումին ներկայացվող՝ վերը նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Գրավոր անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

**Բոլոր դեպքերում լրագրողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, թե իրեն ինչու է անհրաժեշտ տվյալ տեղեկատվությունը, կամ ինչպես է պատրաստվում օգտագործել այն:**

Գրավոր հարցման մեջ նախընտրելի է նշել, թե ինչ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը, քանի որ **գրավոր հարցման պատասխանը** տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով (թուղթ, դիսկետ, էլեկտրոնային նամակ եւ այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, ապա այն տրամադրվում է պաշտոնյանյի համար նախընտրելի կրիչով:

Որպեսզի տեղեկություն ստանալու ձեր հարցումը չմերժվի հարցումին ներկայացվող օրենքի պահանջները չբավարարելու հիմքով, խորհուրդ ենք տալիս կիրառել հարցման օրինակելի նմուշը:

Օրինակելի ձեւ[4]

**Մարմնի, կազմակերպության անվանումը**
**Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը**

**Դիմողի անուն, ազգանուն, հայրանունը**
**/ՁԼՄ-ի անվանումը եւ հասցեն/**

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն/տկն……,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ _____

(հնարավորինս հստակ ձեւակերպեք անհրաժեշտ տեղեկությունը) մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

**Կանխավ շնորհակալ եմ՝**

**անուն, ազգանուն**

ստորագրություն, ամսաթիվ

4. Սույն օրինակելի ձեւը մշակել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը:



Ինչպես նշված է օրինակելի ձեւում, տեղեկություն ստանալու հարցման մեջ անհրաժեշտ է հնարավորինս հստակ ձեւակերպել անհրաժեշտ տեղեկությունը, հատկապես, եթե պահանջում եք կոնկրետ փաստաթուղթ, ապա նշեք բոլոր տվյալները, որ դուք ունեք կոնկրետ փաստաթղթի վերաբերյալ: Հստակ ձեւակերպումն անհրաժեշտ է, որպեսզի մարմինը/կազմակերպությունն ավելի հեշտությամբ կարողանա գտնել եւ կարճ ժամկետում տրամադրել ձեր պահանջած տեղեկությունը:

## 1.3 Ի՞նչ ձեւով եւ ժամկետներում պետք է տրամադրվի տեղեկությունը

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա լինելու ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաեւ՝ քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում)[5]: Սա նշանակում է, որ ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրան ծերբակալելու կամ կալանավորելու դեպքերի[6]:

**Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Դիմողի ցանկությամբ բանավոր հարցումին կարող է տրվել նաեւ գրավոր պատասխան:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9:

**Գրավոր հարցման պատասխանը** տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով (թուղթ, դիսկետ, էլեկտրոնային նամակ եւ այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը «ՏԱ մասին» օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին (պետական մարմնին) առավել ընդունելի նյութական կրիչով:

Հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

5. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 6-րդ հոդված, 12-րդ կետ, 31-րդ հոդված, 1-ին կետ, 1-ին մաս:

6. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, 4-րդ կետ:

**Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.**

1. Տեղեկությունը կամ դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո **5-օրյա ժամկետում**. սա ոչ թե նշանակում է, որ ձեզ պետք է պատասխանեն 5 օր անց, այլ մինչ 5 օրը, ներառյալ՝ անհապաղ:
2. եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկություն տնօրինող մարմինը պետք է գրավոր տեղեկացնի դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Հետաձգման մասին պաշտոնական գրությունը պետք է պարունակի.

- հետաձգման պատճառները,
- տեղեկությունը տրամադրելու վերջնաժամկետը:

**Հիշեք, որ այս ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:**

Բոլոր դեպքերում մարմինը չի կարող անպատասխան թողնել ձեր հարցումը: Դա կդիտվի որպես տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարում եւ ենթակա է բողոքարկման:

Հնարավոր է՝ դուք հարցումը չեք ուղղել ճիշտ մարմնին, նա չունի պահանջվող տեղեկությունը կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է: 2002թ.-ի փետրվարի 21-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» թիվ R (2002) 2 հանձնարարականը նշում է, որ եթե մարմինը չունի անհրաժեշտ պաշտոնական փաստաթուղթը, ապա պետք է հնարավորության դեպքում դիմողին ուղղություն ցույց տա դեպի համապատասխան մարմինը[7], որը տիրապետում է տեղեկատվությանը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ այս դեպքում հարցումը ստացած մարմինը պարտավոր է տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ձեզ գրավոր տեղեկացնել այդ մասին, իսկ հնարավորության դեպքում նաեւ տրամադրել այդ տեղեկատվությունը տնօրինող մարմնի/կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը:

7. «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» թիվ R (2002) 2 Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական, 6-րդ բաժին, 4-րդ կետ, http://www.coe.int/t/dghl/standardsetting/media/Doc/CM/Rec(2002)002_en.pdf



Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկատվության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին՝ միաժամանակ, հնարավորության դեպքում, նշում է այն տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրը, որտեղ դիմողը կարող է գտնել իր փնտրած տվյալների մյուս մասը:

## 1.4 Պե՞տք է արդյոք վճարել տեղեկության տրամադրման համար

ՀՀ Ընտրական օրենսգիրքը վճարովի տեղեկատվության որեւէ դեպք չի նախատեսում:Միաժամանակ, ընտրական տեղեկատվության տրամադրման գործընթացում կարող է կիրառվել նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, համաձայն որի՝ տեղեկության տրամադրման համար վճար չի գանձվում հետեւյալ դեպքերում.

1. բանավոր հարցումներին պատասխանելիս,
2. մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս,
3. տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս,
4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում (այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը) նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում ծավալուն տեղեկատվության տրամադրումը, ինչպիսին ընտրողների ցուցակների թղթային տարբերակն է, կարող է մերժվել՝ պատճառաբանությամբ, թե դրա իրականացումը տեխնիկապես անհնար է, կամ այդ ծավալի տեղեկատվության տրամադրումը ծախսերի հետ է կապված, որոնք պետք է փոխհատուցել: Սակայն փոխհատուցման վճարի չափը չի կարող սահմանվել պաշտոնյայի կողմից կամայականորեն: Տեղեկության տրամադրման համար գանձվող վճարը պետք է ներառի միայն այդ տեղեկության տրամադրման տեխնիկական ծախսերը (պատճենահանման, խտասալիկի արժեքը եւ այլն):

## 1.5 Լրագրողների՝ ընտրական մարմինների նիստերի մասնակցության իրավունքը. Լրագրողի հավատարմագրումը

ՀՀ Ընտրական օրենսգրքի 6-րդ եւ 31-րդ հոդվածներով հստակ սահմանված են լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, պարտականությունները եւ գործունեության երաշխիքները: Վերջիններս, համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի, իրավունք ունեն ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ամբողջ ընթացքում իրավունք ունեն ներկա գտնվել նաեւ տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում) եւ կատարել իրենց մասնագիտական գործունեությունը: Ընտրական օրենսգիրքը նշում է, որ ԶԼՄ ներկայացուցչի իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում[8]: Այսինքն, եթե ընտրական հանձնաժողովի նախագահը կամ որեւէ այլ անձ արգելի լրագրողի մուտքը հանձնաժողով կամ ընտրատարածք, ապա նա ենթակա է պատասխանատվության:

Ամրագրելով ԶԼՄ-ների ներկայացուցիչների՝ քվեարկության սենյակում գտնվելու իրավունքը՝ ՀՀ ԸՕ-ն նրանց նաեւ հնարավորություն է տալիս քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար ազատ տեղաշարժվել քվեարկության սենյակում[9]:

Ընտրական հանձնաժողովների նիստերին եւ քվեարկության ամբողջ ընթացքին ներկա գտնվելու հետ մեկտեղ ՀՀ Ընտրական օրենսգիրքը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին իրավունք է տալիս նաեւ նկարահանել եւ տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը եւ քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը[10]:

Միաժամանակ, ՀՀ ԸՕ-ի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներն իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին: Այսինքն, ներկա գտնվելու եւ մասնակցության իրավունքը չի նշանակում միջամտել ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքին: Լրագրողը պետք է հանդես գա իրադարձությունը դիտողի եւ արձանագրողի դերում: Բնականաբար, օրենսգիրքը նաեւ սահմանում է, որ ԶԼՄ ներկայացուցիչները պարտավոր են պահպանել ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջները[11]:

Ներկա գտնվելուց եւ մասնակցելուց բացի զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչն իրավունք ունի նաեւ՝

1. ԿԸՀ սահմանած կարգով հետեւել քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման եւ քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,
2. անարգել ծանոթանալ քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որեւէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալ տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալ դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների),
3. ներկա գտնվել քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներին,
4. քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն քաղվածքներ կատարել ընտրողների ստորագրած ցուցակներից,
5. օգտվել ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

ԶԼՄ-ների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել նաեւ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկողների քվեարկության կազմակերպմանը[12]:

Ցավոք, ՀՀ ընտրական օրենսգիրքը «անտեսել է» տնային կամ այլ մասնագիտացված հաստատություններում գտնվող եւ տեղաշարժման սահմանափակում ունեցող հաշմանդամների եւ ծերերի տնայցերի միջոցով քվեարկության իրավունքը, հետեւաբար լրագրողները չեն կարող հետեւել այդ կարգավիճակն ունեցող անձանց քվեարկությանը:

8. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, 4-րդ կետ:

9. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, 1-ին կետ, 4-րդ մաս:

10. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 6-րդ հոդված, 2-րդ կետ:

11. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, 5-րդ կետ:

12. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 54-րդ հոդված, 2-րդ կետ, 2-րդ մաս:

**Լրագրողը կարող է կատարել գրառումներ, սղագրություններ, ձայնագրություններ, տեսա եւ լուսանկարահանումներ, տեղեկությունը հստակեցնելու կամ ճշտելու նպատակով տալ հարցեր եւ կատարել այլ գործողություններ, որոնցով սակայն որեւէ կերպ չպետք է միջամտի տվյալ ընտրական հանձնաժողովի բնականոն գործունեությանը:**

## Լրագրողի հավատարմագրումն ընտրական գործընթացներում

Հավատարմագրման նպատակն է աջակցել լրագրողներին կատարելու իրենց մասնագիտական գործունեությունը պետական մարմինների աշխատանքը լուսաբանելիս: Սրանից հետեւում է, որ հավատարմագրման նպատակն է ոչ թե լրացուցիչ սահմանափակումներ ստեղծել լրագրողների գործունեության համար, այլ օժանդակել լրագրողներին իրենց աշխատանքը կատարելու հարցում: Եվրախորհրդի նախարարների խորհրդի 1996թ.-ի (96) 4 հանձնարարականի 11-րդ սկզբունքի համաձայն՝ հավատարմագրումը չպետք է օգտագործվի լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը սահմանափակելու նպատակով:

2012թ.-ի հունվարի 31-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է որոշում, որով սահմանել է ԿԸՀ-ում լրագրողների հավատարմագրման կարգը[13]: Այս որոշմամբ ԿԸՀ-ն սահմանել է լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի՝ ԿԸՀ-ում հավատարմագրման կանոնները եւ հավատարմագրված լրագրողի՝ ընտրական հանձնաժողովներում գործունեության կազմակերպման հիմնադրույթները: Հավատարմագրման նպատակն է ապահովել ԿԸՀ գործունեության թափանցիկությունը եւ այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

Նշենք, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը, սահմանում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքները առանց վերապահումների եւ որեւէ իրավունքի առկայությունը կամ բացակայությունը չի պայմանավորում հավատարմագրված լինելու հանգամանքով: Այսինքն, Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ ԶԼՄ ներկայացուցչի իրավունքներից օգտվում են եւ՛ հավատարմագրված, եւ՛ չհավատարմագրված ԶԼՄ ներկայացուցիչներն առանց խտրականության: Միաժամանակ, ԿԸՀ-ն իր

13. Տես՝ http://res.elections.am/images/dec/12.18n.pdf:



2012թ.-ի հունվարի 31-ի որոշմամբ եւս մեկ անգամ հաստատել է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները՝ անկախ ԿԸՀ-ում հավատարմագրված լինելու հանգամանքից[14]:

**Այսպիսով, ընտրական գործընթացները լուսաբանելու համար լրագրողները հավատարմագրման կարիք չունեն: Լրագրողին անհրաժեշտ է լուսաբանման նպատակով ներկայացնել միայն լրատվամիջոցի կողմից տրված վկայականը, եւ ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է թույլատրել նրան իրականացնել իր մասնագիտական գործունեությունը:**

## Խտրականության բացառումը տարբեր ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ

Ընտրությունների ընթացքում արձանագրվում են խտրականության ամենատարբեր դրսեւորումներ, երբ ընդդիմադիր մամուլի ներկայացուցիչները դիտավորյալ չեն տեղեկացվում կամ հրավիրվում իրադարձությունը կամ միջոցառումը լուսաբանելու, կամ նրանց մուտքը ընտրական հանձնաժողովի նիստերին անօրինականորեն արգելվում է, նրանց համար ստեղծվում են ամենատարբեր տեխնիկական խոչընդոտներ:

Տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու գործընթացում խտրականության որեւէ դրսեւորում անթույլատրելի է: Բոլոր լրագրողները՝ անկախ իրենց լրատվամիջոցի ուղղվածությունից, պաշտոնյայի հետ բարեկամ/ծանոթ լինելու հանգամանքից, կրոնական, սեռային պատկանելիությունից, հաշմանդամությունից, տեղեկություն ստանալիս ունեն հավասար իրավունքներ:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է, որ արգելվում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ խտրականության դրսեւորումը: Այն նշում է, որ հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք, օրինակ, «անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար»: Ի լրումն՝ «Հայաստանի հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը սահմանելու մասին» որոշման

14. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը սահմանելու մասին որոշման հավելված, կետ 13, 14:

հավելվածի 3-րդ կետի 2-րդ մասը սահմանում է, որ ԿԸՀ-ն բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ:

## 1.6 Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ մերժման կարգը

Լրագրողի աշխատանքային պրակտիկայում հաճախ են պատահում տեղեկատվության տրամադրման անօրինական մերժումներ: Ընդհանրապես, տեղեկատվության հարցումը հիմնավորելու անօրինական պահանջը շատ տարածված է եւ այն արդյունավետ առիթ է ծառայում պաշտոնյաների համար խուսափելու անցանկալի հարցումներին պատասխանելու պարտավորությունից: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է իմանալ, թե մերժման ո՞ր հիմքերն են համարվում օրինական:

Լրագրողի հարցումը մերժելու հիմնական հիմքերը սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով: Տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե այն.

**1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,

**2.** խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

**3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,

**4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

**5.** խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

**Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյան կենսական շահերից որեւէ մեկին:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը կարող են անմիջականորեն առնչվել ընտրություններում առաջադրված թեկնածուների անձնական կամ ընտանեկան կյանքին: Դրանց վերաբերյալ տեղեկությունները կարող են օգտագործվել թեկնածուների քարոզարշավի կամ ընտրապայքարի ընթացքում: Պետք է հիշել, որ թեկնածուների նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, հեռագրական եւ այլ հաղորդումները գաղտնի են, եւ դրանց տրամադրումը կարող է մերժվել:

Թեկնածուների գրանցման ժամանակ պահանջվող փաստաթղթերի կազմում թեկնածուն պարտադիր ԿԸՀ ներկայացնում է հայտարարագիր իր գույքի եւ եկամուտների մասին, որը բաց փաստաթուղթ է. դրան կարող է ծանոթանալ լրագրողը, կարող է նաեւ ստանալ դրա պատճենը: Հայտարարագրում լրացվում են անձնական եւ ընտանեկան կյանքին առնչվող բավական ընդարձակ տեղեկություններ:

Եթե առաջադրված թեկնածուի գործը գտնվում է նախաքննության փուլում, եւ դատարանը դեռեւս դատավճիռ չի կայացրել ու հրապարակել այն, թեկնածուի գործով նախաքննության նյութերի վերաբերյալ տեղեկությունների հարցումը կարող է մերժվել:

Ընտրությունները հիմնականում հրապարակային եւ թափանցիկ գործընթաց են: Դրանցում առկա հիմնական գաղտնիքն, այնուամենայնիվ, բուն քվեարկությունն է: Յուրաքանչյուր ընտրող կարող է հրաժարվել հայտնել իր կատարած քվեարկության մասին, իսկ ընտրական հանձնաժողովի անդամները (նաեւ՝ դիտորդները, վստահված անձինք) կարող են մերժել այդ մասին տեղեկության տրամադրումը, որովհետեւ իրավունք չունեն այն իմանալու եւ հրապարակելու:

Համաձայն ՀՀ ԸՕ-ի՝ ընտրական տեղեկատվության մերժման հիմք կարող է լինել նաեւ՝

**ա)** զինվորական մասերում կազմված ընտրողների ցուցակի հրապարակման սահմանափակումը (ԸՕ, հոդված 11),

**գ)** ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման սահմանափակումը (ԸՕ, հոդված 11):

**Հիշեք. տեղեկատվությունը կարող է սահմանափակվել միայն վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում:**

## Մերժման կարգը

Տեղեկատվության տրամադրման մերժումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին: Մերժումը պետք է պարտադիր պարունակի.

- հարցումը մերժելու իրավական հիմքերը (հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, թե օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը),
- մերժումը բողոքարկելու ժամկետները եւ կարգը:

**Մերժողը պարտավոր է հիմնավորել մերժումը:** Հարցման մերժումը պետք է լինի միայն գրավոր, որում պետք է հստակ հիմնավորված լինի մերժումը՝ դիմողին տեղեկացնելով մերժման հիմքերը՝ նշելով, թե օրենքի ո՛ր դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը:

**Մերժումը պետք է տրամադրվի 5-օրյա ժամեկտում:**

Թեեւ օրենքը ոչինչ չի ասում անպատասխան մնացած գրավոր հարցումների մասին, սակայն դա համարվում է տեղեկություն ստանալու խախտում եւ պատժվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն:

Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ («ՏԱ մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետ):



Բաժին 2

# Ինչպե՞ս բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները

## 2.1 Պատասխանատվություն

Ընտրական տեղեկատվության անօրինական մերժումը, լրագրողի հարցումն անպատասխան թողնելը, օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ պատասխանելը, ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելը հանգեցնում են լրագրողի իրավունքների ապօրինի սահմանափակման, ինչը ենթակա է բողոքարկման:

**Ընտրությունների ժամանակ չի թույլատրվում լրագրողի իրավունքների որեւէ սահմանափակում[15]: Լրագրողը չի կարող պատասխանատվության ենթարկվել ընտրությունների ընթացքի եւ արդյունքների ամփոփման վերաբերյալ իր հայտնած կարծիքի համար:**

Օրենսդրությամբ սահմանվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության երեք ձեւ՝

- վերանայում վերադասության կարգով,
- բողոքարկում պետական լիազորված մարմին (մարդու իրավունքների պաշտպանին),
- բողոքարկում դատական կարգով:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումը կարելի է բողոքարկել խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Լրագրողը կարող է բողոքել՝ մարմնից պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Բողոքի հետ անհրաժեշտ է կցել նաեւ մարմնից ստացած պատասխան-մերժումը: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, լրագրողը, որպես հաջորդ քայլ, կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանին կամ դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարելի է դիմել նաեւ առանց վերադասության կարգով բողոքարկելու:

Բողոքարկման երկրորդ փուլը պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է: ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուցմենը՝ մարդու իրա-

15. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, 4-րդ կետ:

վունքների պաշտպանը, որի լիազորությունների մեջ է մտնում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձնաց կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքների քննումը՝ համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի: Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ:

Որպես այլընտրանք, բողոքարկման երկրորդ փուլը կարող է իրացվել դատական համակարգի միջոցով: Դատարանի վրա է դրված մարդու իրավունքների պաշպանության առաքելությունը: Ի դեպ, քանի որ ըստ Սահմանադրության մարդիկ ունեն իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հետեւաբար դատարան կարող են դիմել առանց պաշտպանության վերընշված առաջին երկու ձեւերին դիմելու:

Բողոքարկման այս ընթացակարգերից բացի, տեղեկություն ստանալու իրավունքի ցանկացած խախտման դեպքում լրագրողները կարող են դիմել Ինֆորմացիայի ազատության կենտրոն, որը ձեզ անվճար աջակցություն ցույց կտա:

## 2.2 Ի՞նչ պատասխանատվություն է կրում տեղեկատվություն տնօրինողը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի՝

**«Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման եւ անցկացման օրինականության համար»:**

**«Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»՝**

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 2-րդ մաս:



Նույն հոդվածի 3-րդ մասով արգելվում է՝

1. գրաքննությունը,
2. որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ,
3. լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

Վրոնշյալ բոլոր գործողությունները, ինչպես նաեւ ընտրական մարմինների կողմից տեղեկություն տրամադրելուց ապօրինի հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության օրենքով սահմանված կարգի այլ խախտումները հանգեցնում են ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվության:

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1897-րդ հոդվածի համաձայն՝**

> «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:
>
> Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն անդրադառնում է նաեւ ընտրական գործընթացում տեղ գտած խախտումներին՝ մասնավորապես պատասխանատվություն սահմանելով նախընտրական քարոզչության կարգի եւ քվեարկության անցկացման կարգի խախտումների համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդվածներ 40.1-ից 40.12):

**ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով՝**

> «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատա-

վարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Սույն հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

**Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը** պատասխանատվություն է սահմանում անձի, այդ թվում՝ լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար՝ նշելով՝

«Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով»:

ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են նաեւ հոդվածներ, որոնք հատուկ պատասխանատվություն են նախատեսում ընտրությունների ժամանակ լրագրողների աշխատանքին խոչընդոտելու համար:

Այսպես՝ **ՀՀ քրեական օրենսգրքի 149 հոդվածը** նախատեսում է, որ ընտրական իրավունքի իրականացման դեպքում.

«…զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:



նույն արարքները, որոնք՝

1. կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով (օրինակ՝ կոտրել տեսախցիկը կամ ձայնագրիչը),
2. կատարվել են նյութապես շահագրգռելով (օրինակ՝ գումար առաջարկելով),
3. զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
4. կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով,
5. կատարվել են մի խումբ անձանց կողմից,
6. զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Լրագրողի աշխատանքին եւ տեղեկատվություն ստանալուն խոչընդոտելու համար պատասխանատվություն է նախատեսում նաեւ **ՀՀ Քրեական օրենսգրքի 154.5 հոդվածը.**

«... զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում եւ կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով»:

**Քրեական օրենսգրքի 152 հոդվածը** պատասխանատվություն է նախատեսում ընտրողների ցուցակը քաղաքացիներին եւ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելու համար՝ առաջացնելով տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներ էլ պատասխանատվություն են նախատեսում ընտրական գործընթացներում տեղ գտած խախտումների համար՝ կապված նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու, ընտրողին ընտրությանը մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու, ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու, քվեարկության գաղտնիությունը խախտելու, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու հետ (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 149-ից 154.6):

Բաժին 3

# Պարտադիր հրապարակման ենթակա ընտրական տեղեկությունները եւ դրանց տրամադրման ժամկետները

## 3.1 Ընտրողների ցուցակները

Հաշվի առնելով, որ ընտրողների ցուցակները մշտապես վարվող փաստաթղթեր են՝ դրանցում պարբերաբար կատարվող փոփոխությունների եւ լրացումների մասին տեղեկությունները կարելի է ստանալ՝

- Ինտերնետից (համացանցից),
- ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունից,
- տվյալ համայնքի ղեկավարից,
- ստացիոնար բուժում իրականացնող հաստատությունների ղեկավարներից՝ տվյալ հաստատությունում գտնվող ընտրողների վերաբերալ:

**Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում կազմվող, ինչպես նաեւ ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար[16]:**

Լիազոր մարմինը՝ ՀՀ Ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը, տարին 2 անգամ՝ հունիսին եւ նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, իսկ համապետական ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ՝ նաեւ ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ ԿԸՀ համացանցային կայքում[17]:

ՀՀ ընտրողների ռեգիստրը ԿԸՀ ինտերնետային կայքի (www.elections.am) մշտական եւ անբաժանելի մասն է, որտեղ տեղադրվում են ներկայացվող պահանջներին համապատասխանող ցուցակները:

16. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 11-րդ հոդված, 1-ին կետ:

17. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 7-րդ հոդված, 4-րդ կետ:



Ընտրողների ցուցակների մատչելիությանն ԸՕ-ն անդրադառնում է առանձի հոդվածով (հոդված 11): Այն սահմանում է.

- ընտրողների ցուցակների մատչելիությունը,
- ընտրողների ցուցակների հրապարակման ժամկետները,
- ընտրողների իրազեկումը ընտրական տեղամասերի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը ազատ է ծանոթության համար: Սակայն կան բացառություններ: Ծանոթության համար ազատ չեն.

- զինվորական մասերում կազմվող ցուցակները,
- ընտրողների ստորագրած ցուցակները:

Ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից լուսապատճեններ չեն հանվում, դրանք չեն լուսանկարվում եւ տեսանկարահանվում:

**Ըստ ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է քվեարկության օրվանից 40 օր առաջ:**

Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է նաեւ քվեարկության օրվանից 2 օր առաջ: Այս ցուցակը տեղամասային կենտրոնում մնում է փակցված մինչեւ տեղամասային հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը:

Համապետական եւ Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ Ընտրական օրենսգիրքը սահմանում է նաեւ ընտրողների ցուցակի հրապարակում համացանցի միջոցով:

**Ըստ օրենսգրքի՝ լիազոր մարմինը՝ ՀՀ Ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը, ընտրողների ցուցակը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր եւ 2 օր առաջ տեղադրում է համացանցում: Ընտրողների ցուցակները պետք է ունենան դրանք ներբեռնելու հնարավորություն:**

Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները քվեարկության օրվանից 10 օր առաջ փակցվում են զորամասերում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում:

ՀՀ Ընտրական օրենսգիրքն անդրադառնում է նաեւ ընտրողների իրազեկմանը: Այսպես, օրենսգրքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ այն դեպքում, երբ համայնքում մեկից ավելի ընտրական տեղամաս է կազմավորվում, ՀՀ Ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունն ընտրողներին ուղարկում է ծանուցագրեր՝ քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի եւ ժամանակի մասին: Այդ ծանուցումը ընտրողներին պետք է ներկայացվի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

## 3.2 Քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված հաշվարկները, կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, դրանում նշելով՝

1. յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին-առանձին,
2. ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը, որը հավասար է լրացուցիչ ցուցակների ընտրողների թվերի եւ հիմնական ցուցակում ընդգրկված ընտրողների թվի գումարին,
3. քվեարկության մասնակիցների թիվը (լրացվում է գրանցված եւ քվեաթերթիկներ ստացած ընտրողների ստորագրությունների թիվը),
4. տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը եւ ելունդների համարները (լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը),
5. մարված քվեաթերթիկների (չօգտագործված եւ ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված եւ հետ տված քվեաթերթիկներ) ընդհանուր թիվը,
6. անվավեր քվեաթերթիկների թիվը,
7. յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
8. թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (տողը նշվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում),



9. քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը:

Եթե հանձնաժողովի որեւէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում: Նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո հանձնաժողովն ավարտում է արձանագրության կազմումը, իսկ հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:

**Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո ամփոփում է համապետական ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք ու հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում այդ արդյունքները:**

## 3.3 ԿԸՀ-ի համացանցային կայքը՝ www.elections.am

Հարկ է առանձին խոսել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մասին: Ընտրությունների հրապարակայնության վերաբերյալ հոդվածը ցույց է տալիս, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը ԿԸՀ համացանցային կայքը դիտում է ընտրական գործընթացներում հրապարակայնության ապահովման միջոց, գործիք: Համացանցային հարթակը կարելի է օգտագործել հասարակության ավելի լայն շերտերին իրենց ընտրական իրավունքի մասին իրազեկելու նպատակով:

Այսպես, ընտրական գործընթացի հետ կապված հիմնական տեղեկատվությունը, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է հրապարակել, ինչպես նաեւ ընտրողների ցուցակը, հրապարակման են ենթակա նաեւ համացանցում: Սա ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջն է:

Այսօր ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը հագեցած է բազմապիսի ընտրական տեղեկատվությամբ՝ սկսած նորմատիվ ակտերից եւ ընտրությունների անցկացման կարգերից, մինչեւ թեկնածուների գույքի եւ եկամուտների մասին հայտարարագրեր եւ քվեարկությունների արդյունքների մասին տեղեկություններ:

Հարկ է նշել ՀՀ ԿԸՀ-ի համացանցային կայքի մեկ այլ դրական կողմի մասին: www.elections.am կայքն ունի բաժին թույլ տեսողություն ունեցողների համար՝ «Աջակցություն թույլ տեսողություն ունեցողներին»[18]: Ընտրական իրավունք եւ ընտրական գործընթացների մասին տեղեկացված լինելու իրավունք ունեն բոլորը՝ առանց խտրականության՝ անկախ նրանց առողջական վիճակից, տեսողությունից: www.elections.am կայքի՝ թույլ տեսողություն ունեցողների համար նախատեսված բաժինը ընտրողների խտրականության բացառման վառ օրինակ է: Այս բաժնում ներկայացված է կայքի տարբերակը՝ թույլ տեսողություն ունեցողների համար՝ առավել մեծ չափի տառատեսակներով: Ինչպես նաեւ, այս բաժինն ունի կառավարման հնարավորություն, որը թույլ է տալիս ընտրել տառատեսակը, փոխել տողերի միջեւ հեռավորությունը, ինչպես նաեւ ընտրել գունային սխեման՝ տառերի եւ էկրանի գույները՝ տեքստն առավել ընթեռնելի դարձնելու համար:

18. Տես՝ http://res.elections.am/simple/index.htm:



Նշումների համար

## Հրապարակման ենթակա ընտրական տեղեկատվության ցանկ

## Ընտրական գործընթացներում լրագրողը կամ ԶԼՄ ներկայացուցիչը կարող է ստանալ հետեւյալ տեղեկությունները

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԿԸՀ անհատական եւ նորմատիվ որոշումներ | Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) | | ԿԸՀ, www.elections.am | համապետական ընտրությունների ժամանակահատվածում՝ նույն օրը, իսկ մյուս ընտրությունների դեպքում մինչեւ հաջորդ աշխատանքային օրվա ավարտը: | ՀՀ Ընտրական օրենսգիրք (այսուհետ՝ ԸՕ), հոդված 6, կետ 2 |
| 2 | Հանրապետության Նախագահի թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագրեր | Թեկնածուներ | | ԿԸՀ, www.elections.am | հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 6, կետ 7 |
| 3 | Մյուս թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագրերի պատճեններ | Թեկնածուներ | | ԿԸՀ, ՏԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 6, կետ 7 |
| 4 | Հանրապետության Նախագահի եւ ԱԺ ընտրությունների ժամանակ ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը | Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարող լիազոր մարմինը (այսուհետ՝ ԼՄ)՝ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը | | ԼՄ, ԿԸՀ | քվեարկության օրվանից առաջ 30-րդ, 20-րդ, 10-րդ եւ քվեարկության նախորդ օրը | ԸՕ, հոդված 6, կետ 8 |
| 5 | Ընտրական հանձնաժողովների կազմի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման, գրանցման, քվեարկության օրվա, քվեարկության եւ ընտրությունների արդյունքների մասին տեղեկություններ | | | ԼՄ, ԿԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 6, կետ 9 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Համապետական ընտրությունների ժամանակ ընտրությունների ընթացքի մասին տեղեկություններ | ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթեր | քվեարկության օրը՝ ժամը 9.00-ին | ԸՕ, հոդված 6, կետ 10, 13 |
| 7 | Համապետական ընտրությունների ժամանակ մինչեւ նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ տեղեկություններ ըստ մարզերի (մարզում՝ նաեւ ըստ մարզկենտրոնների եւ մարզի՝ 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) եւ Երեւան քաղաքի | ԿԸՀ | | ԿԸՀ, www.elections.am, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթեր | քվեարկության օրը՝ ժամը 12.00-ից սկսած՝ մինչեւ ժամը 21.00-ն, երեք-ժամյա պարբերականությամբ | ԸՕ հոդված 6, կետ 10, 13 |
| 8 | Ընտրությունների նախնական արդյունքները | ԿԸՀ | | ԿԸՀ, www.elections.am | ընտրական տեղամասից քվեարկության արդյունքների մասին վերջին տեղեկությունները ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում | ԸՕ հոդված 6, կետ 11 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | ՀՀ ընտրողների ռեգիստրը | ԼՄ | | ԿԻՀ, www.elections.am | տարին 2 անգամ՝ հունիսին եւ նոյեմբերին՝ առաջին մեկ շաբաթվա ընթացքում՝ ըստ համայնքների, համապետական ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ՝ ըստ ընտրական տեղամասերի | ԸՕ հոդված 7, կետ 4 |
| 10 | Տեղեկություններ ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի եւ պայմանների մասին | ԼՄ | | Տեղամասային կենտրոն (այսուհետ՝ ՏԿ) | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ | ԸՕ հոդված 10, կետ 1 |
| 11 | ՀՀ ընտրողների ցուցակը՝ ներբեռնելու հնարավորությամբ (բացառությամբ զինվորական մասերում կազմվող եւ ընտրողների ստորագրած ցուցակների) | ԼՄ | | ԼՄ, ԼՄ կայք, ՏԿ | քվեարկության օրվանից 40 եւ 2 օր առաջ | ԸՕ հոդված 11, կետ 1, 2, 3, 4 |
| 12 | Տեղեկություններ քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի եւ ժամանակի մասին | ԼՄ | | ԼՄ | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ | ԸՕ, հոդված 11, կետ 6 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդունող մարմինը | | | | |
| 13 | Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը փոխելու մասին տեղեկատվություն | | | Համայնքի ղեկավար | անհապաղ | ԸՕ, հոդված 16, կետ 3 |
| 14 | Քվեաթերթիկների նմուշները | ԿԸՀ | | ԿԸՀ, ՏԿ | քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ | ԸՕ, հոդված 31, կետ 3<br>հոդված 57,կետ 6<br>հոդված 59, կետ 6 |
| 15 | Ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերի պատճենները կամ դրանցից քաղվածքներ | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 31, կետ 3 |
| 16 | Ընտրական հանձնաժողովների որոշումների պատճենները կամ դրանցից քաղվածքներ | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 31, կետ 3 |
| 17 | Ընտրական հանձնաժողովների նիստերի արձանագրությունների պատճենները կամ դրանցից քաղվածքներ | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | | ԿԸՀ, ԸԸՀ, ՏԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 31, կետ 3 |
| 18 | Դատարանի համապատասխան վճիռների պատճենները կամ դրանցից քաղվածքներ | Դատարաններ | | Դատարաններ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 31, կետ 3 |
| 19 | Լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքի պատճենները կամ դրանցից քաղվածքներ | ԼՄ | | ԼՄ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 31, կետ 3 |
| 20 | Տեղեկություններ ընտրական հանձնաժողովների կազմի վերաբերյալ | ԿԸՀ | | ԿԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 39, կետ 7 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ նշանակելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագիր | Հանրապետության Նախագահ | | Հանրապետության Նախագահի աշխատակազմ, պաշտոնական տեղեկագիր | ԿԸՀ անդամի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան 7 օր առաջ | ԸՕ, հոդված 40, կետ 6 |
| 22 | Տեղեկություններ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ ընտրվելու համար քաղաքացիների դիմումների ներկայացման ժամկետների մասին | ԿԸՀ | | ԿԸՀ, ՁԼՄ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 41, կետ 4 |
| 23 | Տեղեկություններ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջների մասին | ԿԸՀ | | ԿԸՀ, ՁԼՄ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 41, կետ 4 |
| 24 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ ընտրվելու համար դիմումի ձեւը եւ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը | ԿԸՀ | | ԿԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 41, կետ 4 |
| 25 | ԿԸՀ վարչական ակտերը | ԿԸՀ | | ԿԸՀ, www.elections.am | ուժի մեջ է մտնում ԿԸՀ համացանցային կայքում տեղադրելու պահից | ԸՕ, հոդված 45, կետ 5 |
| 26 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վարչական ակտերը | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ԸԸՀ) | | ԸԸՀ, բոլորի համար տեսանելի տեղ (օրինակ՝ տարածքային ցուցատախտակներ) | ուժի մեջ է մտնում բոլորի համար տեսանելի տեղում ակտի օրինակը փակցնելու պահից | ԸՕ, հոդված 45, կետ 6 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 27 | Տեղեկություններ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ | ԿԸՀ | | ԿԸՀ, www.elections.am | համապետական ընտրությունների արդյունքների հրապարակումից | ԸՕ, հոդված 49, կետ 2 |
| 28 | Անվավեր ճանաչված քվեաթերթիկների, յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկած քվեաթերթիկների, իսկ մեկ թեկնածու քվեարկելու դեպքում՝ թեկնածուին կողմ եւ դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը | ՏԸՀ | | ՏԸՀ | քվեարկության ծրարները եւ քվեաթերթիկները հաշվելուց հետո | ԸՕ, հոդված 67, կետ 6 |
| 29 | Տեղեկություններ ընտրությունների արդյունքների մասին (ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը) | ՏԸՀ | | ՏԸՀ | նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո | ԸՕ, հոդված 71, կետ 5 |
| 30 | Ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը | ԸԸՀ | | ԸԸՀ | անհապաղ | ԸՕ, հոդված 73, կետ 3 |
| 31 | Աժ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների մասին արձանագրություն | ԸԸՀ | | ԸԸՀ | անհապաղ, նաեւ դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 74, կետեր 5,7 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 32 | Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններ | ԸԸՀ | | ԸԸՀ | անհապաղ, նաեւ դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 74, կետեր 5,7 |
| 33 | Տեղեկություններ ԱԺ համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների մասին | ՏԸՀ, ԸԸՀ, ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթեր | քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ | ԸՕ, հոդված 75, կետ 1 |
| 34 | Տեղեկություններ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների մասին | ՏԸՀ, ԸԸՀ, ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթեր | քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ | ԸՕ, հոդված 75, կետ 1 |
| 35 | Համապետական ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն | ԿԸՀ | | ԿԸՀ | քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը | ԸՕ, հոդված 75, կետ 2 |
| 36 | Հանրապետության Նախագահի թեկնածուների գրանցման մասին հաղորդագրությունը | ԿԸՀ | | ԿԸՀ | 3-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 81, կետ 4 |
| 37 | Հանրապետության նախագահի ընտրությունը | ԸՕ | | ԿԻՀ | Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից 50 օր առաջ | ԸՕ, հոդված 96, կետ 1 |
| 38 | Հանրապետության նախագահի ընտրություն նշանակելու մասին հաղորդագրությունը | ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսություն | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ | ԸՕ, հոդված 96, կետ 2 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 39 | Հանրապետության Նախագահի նոր ընտրությունը | ԸՕ | | ԿԸՀ | նոր ընտրություն նշանակվելուց հետո՝ 40-րդ օրը | ԸՕ, հոդված 98, կետեր 1, 2, 3 |
| 40 | Հանրապետության Նախագահի արտահերթ ընտրությունը | ԸՕ | | ԿԸՀ | հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 40-րդ օրը | ԸՕ, հոդված 99, կետեր 1, 2 |
| 41 | Հանրապետության նախագահի նոր եւ արտահերթ ընտրություն նշանակելու մասին հաղորդագրությունը | ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսություն | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 39 օր առաջ | ԸՕ, հոդված 100, կետ 1 |
| 42 | Ընտրողների ցուցակները Հանրապետության Նախագահի նոր եւ արտահերթ ընտրությունների ժամանակ | ԼՄ | | ԼՄ, ՏԿ | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ | ԸՕ, հոդված 101, կետ 3 |
| 43 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների՝ համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակները | ԿԸՀ | | ԿԸՀ | գրանցման համար սահմանված ժամկետը ավարտվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 109, կետ 2 |
| 44 | ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուին գրանցելու մասին որոշում | ԸԸՀ | | ԸԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 115, կետ 6 |
| 45 | Ազգային ժողովի հերթական ընտրությունը | ԸՕ | | ԿԸՀ | ԱԺ լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուտ, քան 40, եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ | ԸՕ, հոդված 127, կետ 1 |
| 46 | Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու մասին հրամանագիրը | Հանրապետության Նախագահ | | Հանրապետության Նախագահի աշխատակազմ, պաշտոնական տեղեկագիր | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ | ԸՕ, հոդված 127, կետ 2 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 47 | Ազգային ժողովի լրացուցիչ ընտրությունները | ԸՕ | | ԿԸՀ | Աժ մեծամասնական ընտրակարգով մանդատը թափուր մնալուց հետո՝ 80-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 128,կետ 2 |
| 48 | Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները | ԸՕ | | ԿԸՀ | Աժ-ն արձակելուց ոչ շուտ, քան 30, եւ ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում | ԸՕ, հոդված 129, կետ 1 |
| 49 | Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու մասին հրամանագիրը | Հանրապետության Նախագահ | | Հանրապետության Նախագահի աշխատակազմ, պաշտոնական տեղեկագիր | Ազգային ժողովն արձակելու մասին հրամանագրի հետ միաժամանակ | ԸՕ, հոդված 129, կետ 2 |
| 50 | Համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուին գրանցելու մասին որոշում | ԸԸՀ | | ԸԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 134, կետ 1 |
| 51 | Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը | ԿԸՀ | | ԿԸՀ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 145, կետ 1 |
| 52 | Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները | Մարզպետ | | Մարզպետի աշխատակազմ, մարզպետարան | համայնքի ղեկավարի, ավագանու անդամների լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 70 օր առաջ | ԸՕ, հոդված 145, կետ 2 |
| 53 | Տեղական ինքնակառավարման մարմինների նոր ընտրությունը | Մարզպետ | | Մարզպետի աշխատակազմ, մարզպետարան | ՏԻՄ ընտրությունները չկայացած ճանաչելու մասին ԸԸՀ որոշումն ընդունելուց կամ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը | ԸՕ, հոդված 146, կետ 1 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 54 | Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը | ԸՕ | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու կամ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը | ԸՕ, հոդված 147, կետ 1 |
| 55 | Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության նշանակման մասին որոշում | ՀՀ Կառավարություն | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հետ միաժամանակ | ԸՕ, հոդված 147, կետ 2 |
| 56 | Համայնքի ավագանու արտահերթ ընտրությունը | ԸՕ | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | արտահերթ ընտրություն նշանակելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 40-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը | ԸՕ, հոդված 147, կետ 3 |
| 57 | Համայնքի ավագանու արտահերթ ընտրության նշանակման մասին որոշում | ՀՀ Կառավարություն | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 147, կետ 3 |
| 58 | Երեւանի ավագանու հերթական ընտրությունը | ԸՕ | | ԿԸՀ | Երեւանի ավագանու լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 40, եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ | ԸՕ, հոդված 152, կետ 1 |
| 59 | Երեւանի ավագանու հերթական ընտրության նշանակման մասին որոշում | ՀՀ Կառավարություն | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | հաշվարկով, որ որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ | ԸՕ, հոդված 152, կետ 2 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 60 | Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունը | ԸՕ | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | Երեւանի ավագանու լիազորությունների ժամկետը կրճատելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ շուտ, քան 30, եւ ոչ ուշ, քան 40 օր հետո՝ կիրակի օրը | ԸՕ, հոդված 153, կետ 1 |
| 61 | Երեւանի ավագանու արտահերթ ընտրության նշանակման մասին որոշում | ՀՀ Կառավարություն | | ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | Երեւանի ավագանին արձակելու մասին որոշման հետ միաժամանակ | ԸՕ, հոդված 153, կետ 2 |
| 62 | Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների օրվա մասին հաղորդագրությունը | ԿԸՀ | | ԿԸՀ, Հայաստանի հանրային ռադիո եւ հանրային հեռուստատեսություն | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 29 օր առաջ | ԸՕ, հոդված 153, կետ 3 |
| 63 | Ընտրողների ցուցակները Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ | ԼՄ | | ԼՄ, ՏԿ | քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ | ԸՕ, հոդված 153, կետ 6 |
| 64 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ | ԿԸՀ | | ԿԸՀ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ | ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետը ավարտվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 155, կետ 6 |
| 65 | Կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 3, կետ 2 |
| 66 | Կուսակցության հիմնադիր եւ ծրագրային փաստաթղթերը | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն | չկա ժամկետային սահմանափակում, դիմելուց հետո 5-օրյա ժամկետում | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 8, կետ 4 |

| N | Տեղեկատվության տեսակը | Տեղեկատվության աղբյուրը<br>Ընդունող մարմինը | | Տեղեկություն տնօրինողը | Տեղեկատվության տրամադրման ժամկետները | Օրենսդրական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 67 | Կուսակցության գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվության պատճենը, դրա կազմավորման աղբյուրների մասին տեղեկատվություն | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն, www.azdarar.am | յուրաքանչյուր տարի | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 22, կետ 2 |
| 68 | Կուսակցությունների ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվության պատճեն | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն, մամուլ | հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 28, կետ 2 |
| 69 | Կուսակցությանը նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն | հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 28, կետ 5 |
| 70 | Տեղեկատվություն կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման տեղի եւ ժամի մասին | Կուսակցություն | | համապատասխան կուսակցություն | կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ | Կուսակցությունների մասին օրենք, հոդված 12, կետ 1 |
| 71 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների գույքի եւ ֆինանսական միջոցների հայտարարագրեր | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններ | | ԿԸՀ, www.elections.am | հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում | ԸՕ, հոդված 6, կետ 7 |

**(c) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»**

ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 560 360
էլ. փոստ. foi@foi.am
www.foi.am